**Համաշխարհային տնտեսական համաժողովի**
**«Համաշխարհային մրցունակության 2014 - 2015 թթ. ինդեքս»**[1]

2014թ. սեպտեմբերի 3-ին Համաշխարհային տնտեսական համաժողովը հրապարակել է ***«Համաշխարհային մրցունակություն 2014/2015»*** զեկույցը, որում Հայաստանը աշխարհի 144 երկրների շարքում զբաղեցրել է 85-րդ տեղը՝ նախորդ տարվա 79-րդ տեղի համեմատ (աշխարհի 148 երկրների շարքում)[2]: Հայաստանի մրցունակության գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.09 միավորով և կազմել 4.01 միավոր՝ 7.0 լավագույն հնարավորից:

Երկրների մրցունակության մակարդակը գնահատելու նպատակով Համաժողովի փորձագետները դիտարկել են յուրաքանչյուր երկրի տնտեսությունը բնութագրող 114 առանձին ցուցանիշներ, որոնք ամփոփվում են ***տասներկու հիմնասյուների*** մեջ: Դրանք են՝

- **Հաստատություններ**
- **Ենթակառույցներ**
- **Մակրոտնտեսական կայունություն**
- **Առողջապահություն և տարրական կրթություն**
- **Բարձրագույն կրթություն և վերապատրաստումներ**
- **Ապրանքային շուկայի արդյունավետություն**
- **Աշխատուժի շուկայի արդյունավետություն**
- **Ֆինանսական շուկայի զարգացվածություն**
- **Տեխնոլոգիական պատրաստվածություն**
- **Շուկայի չափ**
- **Գործարարության զարգացվածություն**
- **Նորամուծություններ:**

Վերոնշյալ հիմնասյուներում ներառված ցուցանիշների հիմնական մասը ստացվում է **Ղեկավարների կարծիքի հարցումների** (**Executive Opinion Survey)** հիման վրա[3]: 2014-2015թթ. զեկույցի հիմքում ընկած հարցումներն իրականացվել են 2014թ. փետրվարից մինչև հունիս ընկած ժամանակահատվածում, որին մասնակցել են աշխարհի 148 երկրների 14,000 գործարար-

---

[1] *Աղբյուրը՝ **«Համաշխարհային մրցունակության 2014-2015 զեկույց»**, Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2014թ., 565 էջ:*

[2] *Համաշխարհային տնտեսական համաժողովը երկրների մրցունակության ինդեքսների ժամանակագրական համադրելիությունն ապահովելու նպատակով հրապարակում է նաև այդ երկրների դիրքերը՝ ճշգրտված նախորդ տարում իր կողմից դիտարկված երկրների թվաքանակով: Արդյունքում, Հայաստանը ներկայումս 85-րդ տեղն է զբաղեցնում նաև իր ճշգրտված դիրքով՝ նախորդ տարում (2013թ.) Համաժողովի կողմից դիտարկված 148 երկրների շարքում:*

[3] *Ղեկավարների կարծիքի հարցումներն (Executive Opinion Survey) իրականացվում են աշխարհի տարբեր երկրներում գործարար-ղեկավարների շրջանում և ներառում են այնպիսի թեմաներ, որոնց համար տվյալների աղբյուրները սակավ են կամ, երբեմն, գլոբալ մասշտաբով գոյություն չունեն: Այն օգնում է գնահատել երկրներում հմտությունների բացը, կոռուպցիայի մակարդակը, շուկայական մրցակցության ինտենսիվությունը և այդ հարցումներն ավելի որակյալ արդյունքներ են տալիս, քան կոշտ տվյալները: Այսինքն, այս հարցումները հանդիսանում են անհրաժեշտ լրացում այն տվյալների, որոնք հրապարակվում են միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների կողմից:*

ղեկավարներ, սակայն տվյալների անբավարարության պատճառով 2014-2015թթ. զեկույցում ներառվել են միայն 144 երկրներ[4]:

Համեմատելով Համաշխարհային տնտեսական համաժողովի 2014-2015թթ. և 2013-2014թթ. զեկույցներում հրապարակված Հայաստանի մրցունակության 12 հիմնասյուների գնահատականները և դիրքերը, նկատում ենք, որ բարելավում է գրանցվել դրանցից 3-ում, իսկ վատացում՝ 9-ում: Մասնավորապես՝ բարելավում է արձանագրվել **ենթակառույցների** (2 տեղով)**, բարձրագույն կրթության/ վերապատրաստման** (2 տեղով) և **տեխնոլոգիական պատրաստվածության** (1 տեղով) ոլորտներում: Միևնույն ժամանակ զգալի հետընթաց է արձանագրվել **աշխատուժի շուկայի արդյունավետության** (24 տեղով), **ֆինանսական շուկայի զարգացվածության** (21 տեղով), **առողջապահության և առաջնային կրթության** (14 տեղով) և **մակրոտնտեսական կայունության** (13 տեղով) ոլորտներում (տե՛ս աղյուսակ 1):

Ուշագրավ է այն փաստը, որ ի տարբերության 2013/2014թթ. զեկույցի, որում Հայաստանը դասվել էր **ռեսուրսների վրա հիմնված զարգացման փուլից դեպի հաջորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլ անցնող** երկրների թվին, քանի որ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն (ըստ գնողունակության համարժեքության) 2012թ.-ին ցածր էր եղել 3000 ԱՄՆ դոլարից, ապա այս տարի Հայաստանը դասվել է **արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում գտնվող** երկրների թվին[5]: Այս փուլում Հայաստանի մրցունակության գնահատման ժամանակ առավել մեծ կշիռներ են տրվում բարձրագույն կրթության եւ վերապատրաստման բարելավմանը (հիմնասյուն 5), ապրանքային շուկայի և աշխատուժի շուկայի արդյունավետության բարձրացմանը (հիմնասյուներ 6 և 7), ֆինանսական շուկայի շարունակական զարգացմանը (հիմնասյուն 8), առաջավոր տեխնոլոգիաներից ակտիվորեն օգտվելու ունակությանը (հիմնասյուն 9) եւ Հայաստանի ներքին կամ արտաքին շուկաների մեծությանը (հիմնասյուն 10): Դա ենթադրում է, որ ներկայումս Հայաստանի տնտեսական զարգացումը պետք է հիմնվի առավել արդյունավետ արտադրական գործընթացների կազմակերպման և առավել բարձրորակ արտադրանքի թողարկման վրա: Նկատենք, որ ներկայումս, բացի Հայաստանից, **արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլում** ներառված են Վրաստանը, Ալբանիան, Բուլղարիան, Մակեդոնիան, Մոնտենեգրոն, Ռումինիան, Սերբիան և Ուկրաինան:

Այժմ ներկայացնենք Հայաստանի դիրքի փոփոխությունները ըստ **«Համաշխարհային մրցունակության 2014-20145թթ. ինդեքս»** զեկույցի 12 հիմնասյուների, ինչպես նաև նկարագրենք Հայաստանի դիրքը՝ տարածաշրջանային համապատկերում:

---

[4] *Հինգ երկրներ՝ Բենինը, Բոսնիա-Հերցեգովինան, Բրունեյ Դարուսալամը, Էկվադորը և Լիբերիան դուրս են մնացել 2014/2015թթ. զեկույցից՝ գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով: Տաջիկստանը, որը դուրս էր մնացել 2013/2014թթ.զեկույցից, նորից ներգրավվել է 2014/2015թթ. զեկույցում:*

[5] *Երկրի ներառումը տնտեսական զարգացման որևէ փուլում կատարվում է ըստ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և երկրի արտահանման ռեսուրսահինդեքսվության: Ընդ որում՝ ռեսուրսների վրա հիմնված փուլում **(առաջին փուլ)** ներառված են այն երկրները, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն չի գերազանցում 2000 ԱՄՆ դոլարը և արտահանման ռեսուրսահինդեքսվությունը բարձր է 90%-ից: Ռեսուրսների վրա հիմնված փուլից դեպի հաջորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլին **անցման շրջանում** այն երկրներն են, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն գտնվում է 2000 - 2999 ԱՄՆ դոլար միջակայքում, իսկ արտահանման ռեսուրսահինդեքսվությունը բարձր է 70%-ից: Արդյունավետության վրա հիմնված փուլում **(երկրորդ փուլ)** ներառված են այն երկրները, որտեղ որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն գտնվում է 3000- 8999 ԱՄՆ դոլար միջակայքում, իսկ արտահանման ռեսուրսահինդեքսվությունը ցածր է 70%-ից:*

**«Հաստատություններ»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 7 տեղով, որը հիմնականում պայմանավորված է **խնդրահարույց հարցերի լուծման գործում օրենսդրական համակարգի ցածր արդյունավետությամբ** (վատացում 22 տեղով), **վեճերի կարգավորման գործում օրենսդրական համակարգի ցածր արդյունավետությամբ** (վատացում 21 տեղով), **կառավարության ծախսումների շռայլմամբ** (վատացում 16 տեղով), **կառավարության քաղաքականության թափանցիկության անբավարար մակարդակով** (վատացում 15 տեղով), **մասնավոր սեփականության իրավունքի թույլ պաշտպանվածությամբ** (վատացում 13 տեղով) և մի շարք այլ ոլորտների հետընթացով (տե՛ս աղյուսակ 2): Նկատենք, որ նշված բոլոր ոլորտների գնահատականները ստացվել են Հայաստանի գործարար-ղեկավարների շրջանում իրականացված հարցումների արդյունքում: Նշենք, որ երկրում գործող **հաստատությունների** որակով Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան երկրների թվում գերազանցում է Սլովենիային, Չեխիային, Հունգարիային, Խորվաթիային, Ռումինիային, Ռուսաստանին, Ալբանիային, Սլովակիային, Բուլղարիային, Մոլդովային, Սերբիային, Ղրղզստանին, Ուկրաինային, ինչպես նաև Իրանին (տե՛ս աղյուսակ 6):

**Ենթակառույցներ** հիմնասյան գծով, ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի դիրքը բարելավվել է 2 տեղով: Դա հիմնականում պայմանավորված է եղել **բջջային հեռախոսների բաժանորդների** թվաքանակի ավելացման (բարելավում 10 տեղով), **հեռախոսային գծերի տարածման** (բարելավում 7 տեղով), Հայաստանի **ընդհանուր ենթակառույցների որակի** բարելավմամբ (6 տեղով) և 1 շնչի հաշվով **թռիչքային կիլոմետրի** ավելացմամբ (բարելավում 6 տեղով): Սակայն միևնույն ժամանակ նշենք, որ 12 տեղով հետընթաց է արձանագրվել **նավահանգստային ենթակառույցի որակի** և 6 տեղով՝ **օդային տրանսպորտի ենթակառույցի որակի** գծով: Նկատենք, որ Հայաստանի, ինչպես նաև ծովին մուտք չունեցող մյուս երկրների համար նավահանգստային ենթակառույցի գնահատականը ձևավորվում է տվյալ երկրի գործարար-ղեկավարներին տրված հետևյալ հարցի հիման վրա. «Ինչքանո՞վ են ձեզ հասանելի նավահանգստային մեխանիզմները»: Նախորդ տարվա հարցման արդյունքում ստացվել էր 3.0 միավոր՝ 7.0 լավագույն հնարավորից, սակայն այս տարվա հարցման արդյունքում ստացվել է 2.5 միավոր, որի պատճառով էլ Հայաստանի դիրքը վատացել է այս ոլորտի գծով: Ներկայումս «**ենթակառույցներ»** հիմնասյան դիրքով Հայաստանը գերազանցում է Մակեդոնիային, Մոլդովային, Ռումինիային, Ալբանիային, Ղրղզստանին և Տաջիկստանին (տե՛ս աղյուսակ 6):

**«Մակրոտնտեսական կայունություն»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 13 տեղով՝ պայմանավորված 2013թ. միջին տարեկան **գնաճի** համեմատաբար բարձր (5.8%) մակարդակով (վատացում 103/73 տեղով)[6], **ՀՆԱ-ում համախառն ազգային**

---

[6] *Համաձայն Համաժողովի մեթոդաբանության, այն երկրները, որտեղ գնաճը կազմել է 0.5%-ից մինչև 2.9%, ստանում են ամենաբարձր՝ «7» գնահատականը, այսինքն՝ զբաղեցնում են առաջին տեղը: Որքան գնաճի մակարդակները հեռանում են վերոնշյալ միջակայքից, այնքան երկրների գնահատականները գծայնորեն նվազում են: 2013/2014թթ. զեկույցում դիտարկված 148 երկրների շարքում Հայաստանը 1-ին տեղը կիսում էր 43 այլ երկրների հետ, իսկ առաջին տեղը զբաղեցնող 43 երկրների թվում զբաղեցնում էր 31-րդ տեղը:*

**խնայողությունների** մակարդակի 1.8%-ով նվազմամբ (վատացում 19 տեղով)[7], **ՀՆԱ-ում պետբյուջեի պակասուրդի** (2.5%) ավելացմամբ (վատացում 14 տեղով)[8] և **ՀՆԱ-ում պետական պարտքի** մակարդակի (2.4%) ավելացմամբ (վատացում 3 տեղով)[9]: Այս ցուցանիշների վատացման արդյունքում Հայաստանի **«Մակրոտնտեսական կայունություն»** հիմնասյան գնահատականը կարող էր ավելի նվազել, եթե **սուվերեն վարկանիշի** գնահատականը չբարելավվեր 3.5%-ով (բարելավում 10 տեղով)[10]: **Մակրոտնտեսական կայունության** ապահովմամբ, որի գնահատման հիմքում դրվել են Հայաստանի տնտեսության 2013թ. ցուցանիշները, Հայաստանը գերազանցում է Մոնտենեգրոյին, Խորվաթիային, Սլովենիային, Ղրղզստանին, Ուկրաինային, Ալբանիային և Սերբիային (տե՛ս աղյուսակ 6):

**«Առողջապահություն և առաջնային կրթություն»** հիմնասյան գնահատականի վատացումը 14 տեղով հիմնականում պայմանավորված է **առաջնային կրթության (դպրոցների) որակի** (վատացում 6 տեղով) և **առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածության** նվազմամբ (վատացում 5 տեղով): **Առողջապահության և առաջնային կրթության** ցուցանիշով Հայաստանը գերազանցում է միայն Ղրղզստանին և Ադրբեջանին (տե՛ս աղյուսակ 6):

**«Բարձրագույն կրթություն ու վերապատրաստում»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 2 տեղով՝ պայմանավորված **երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածության** մեծացմամբ (բարելավում 10 տեղով), **դպրոցներում ինտերնետի հնարավորությունների** ընդլայնմամբ (բարելավում 10 տեղով), ինչպես նաև **կառավարման դպրոցների որակի** բարձրացմամբ (բարելավում 7 տեղով): Սակայն միևնույն ժամանակ արձանագրվել է հետընթաց **կրթության համակարգի որակի** (17 տեղով), **մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածության** (8 տեղով), **անձնակազմի վերապատրաստման մակարդակի** (5 տեղով), **մաթեմատիկական և գիտական կրթության որակի** (2 տեղով) և **տեղական մասնագիտացված գիտահետազոտական ու ուսումնական ծառայությունների մատչելիության** (13 տեղով) ոլորտներում: **Բարձրագույն կրթության և վերապատրաստման** ոլորտում իր զարգացումներով Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան երկրների թվում գերազանցում է Մոլդովային, Տաջիկստանին, Ադրբեջանին, Ղրղզստանին և Վրաստանին, ինչպես նաև Իրանին (տե՛ս աղյուսակ 7):

**«Ապրանքային շուկայի արդյունավետություն»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 6 տեղով, ընդ որում այս հիմնասյան 16 տարրերից վատացել են 9-ը: Ամենամեծ հետընթացը գրանցվել է **գյուղատնտեսական քաղաքականության ծախքերի** (34 տեղով), **շուկայի գերիշխանության** (18 տեղով), **գործարարություն վրա օտարերկրյա ներդրումների**

---

*7 Հայաստանի ազգային խնայողություններ/ՀՆԱ ցուցանիշը 2013թ. կազմել է 15.5%՝ նախորդ տարվա 17.3%-ի համեմատ:*

*8 Հայաստանի պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2013թ. կազմել է 2.5%՝ նախորդ տարվա 1.5%-ի համեմատ:*

*9 Հայաստանի պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2013թ. կազմել է 41.9%՝ նախորդ տարվա 39.5%-ի համեմատ:*

*10 Համաշխարհային տնտեսական համաժողովի փորձագետները որպես սուվերեն վարկանիշի գնահատման հիմք վերցնում են «Ինստիտուցիոնալ ներդրող» կազմակերպության (Institutional Investor LLC) փորձագետների կողմից կիսամյա պարբերականությամբ (յուրաքանչյուր տարվա մարտին և սեպտեմբերին) հրապարակվող գնահատականները: «Ինստիտուցիոնալ ներդրող»-ի փորձագետները հարցումների հիման վրա գնահատում են սուվերենի պարտքային դեֆոլտի հավանականությունը 0-100 սանդղակով, որտեղ 100-ը ցույց է տալիս դեֆոլտի ամենացածր հավանականությունը: «Ինստիտուցիոնալ ներդրող»-ը 2013թ. մարտի դրությամբ Հայաստանի սուվերեն վարկանիշը գնահատել էր «34.5» միավոր, իսկ 2014թ. մարտի դրությամբ՝ «38.0» միավոր:*

**կանոնակարգման ազդեցության** (16 տեղով), **ներդրում կատարելու խթանների վրա հարկավորման ազդեցության** (9 տեղով), **գնորդների զարգացածության** (8 տեղով) և **հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության** (8 տեղով) ոլորտներում: Միևնույն ժամանակ, այս հիմնասյան մի շարք ոլորտներում արձանագրվել է զգալի բարելավում: Այդ ոլորտներն են՝ **գործարարություն սկսելու համար պահանջվող օրերի քանակը** (25 տեղով), **տեղական մրցակցության ինտենսիվությունը** (17 տեղով), **մաքսային գործընթացների բեռի** թեթևացումը (15 տեղով), **առևտրային խոչընդոտների** վերացումը (14 տեղով): **Ապրանքային շուկայի արդյունավետության** մակարդակով Հայաստանը գերազանցում է Հունգարիային, Սլովակիային, Մոնտենեգրոյին, Ադրբեջանին, Ղրղզստանին, Ռումինիային, Ալբանիային, Ռուսաստանին, Մոլդովային, Խորվաթիային, Ուկրաինային, Տաջիկստանին, Իրանին և Սերբիային (տե՛ս աղյուսակ 7):

**«Աշխատուժի շուկայի արդյունավետության»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 24 տեղով և դա հիմնականում պայմանավորված է եղել **աշխատավարձի սահմանման ցածր ճկունությամբ** (վատացում 27 տեղով), **աշխատելու խթանների վրա հարկավորման բեռի ազդեցությամբ** (վատացում 16 տեղով), **աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի թույլ կապով** (վատացում 12 տեղով), **գործատու-աշխատող փոխհարաբերություններում թույլ համագործակցությամբ** (վատացում 7 տեղով) և մի շարք այլ ոլորտների վատացմամբ (տե՛ս աղյուսակ 7): Եթե Համաշխարհային տնտեսական համաժողովի 2013/2014թթ. զեկույցում Հայաստանը **աշխատուժի շուկայի արդյունավետությամբ** զիջում էր միայն Էստոնիային, Ղազախստանին, Լատվիային, Ադրբեջանին և Վրաստանին, ապա 2014/2015թթ. զեկույցում զիջում է նաև Ռուսաստանին, Լիտվային, Չեխիային, Տաջիկստանին, Մոնտենեգրոյին, Բուլղարիային և Մակեդոնիային:

«**Ֆինանսական շուկայի զարգացվածություն»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 21 տեղով, ընդ որում այս հիմնասյան գնահատականի հիմքում ընկած 8 ոլորտներից (ցուցանիշներից) 6-ի գծով գրանցվել է Հայաստանի դիրքի հետընթաց: Մասնավորապես, զգալի հետընթաց է արձանագրվել «**Ֆինանսական ծառայությունների մատչելիություն»** (31 տեղով)**,** «**բանկերի ամրություն»** (13 տեղով), **«Ֆինանսական ծառայությունների առկայություն»** (12 տեղով), **«վարկերի մատչելիություն»** (9 տեղով) ոլորտներում: Փոքր վատացում է արձանագրվել նաև **«վենչուրային կապիտալի առկայություն»** (3 տեղով) և **«արժեթղթերի շրջանառության կարգավորումներ»** (2 տեղով) ոլորտներում: Նկատենք, որ այս բոլոր ոլորտների գնահատականները ձևավորվել են Հայաստանի գործարար-ղեկավարների հարցումների հիման վրա: Ուսումնասիրելով վերոնշյալ ոլորտների դինամիկան, նկատում ենք, որ **Ֆինանսական շուկայի զարգացվածություն** հիմնասյան գծով Հայաստանի դիրքի վատացումը ոչ միշտ է պայմանավորված եղել դրա հիմքում ընկած ոլորտների **գնահատականների** վատացմամբ: Մասնավորապես, ինչպես երևում է վերևում բերված աղյուսակից, «**վենչուրային կապիտալի առկայություն»** ոլորտի գնահատականը նախորդ

տարվա համեմատ մնացել է անփոփոխ (2.4 միավոր), սակայն Համաշխարհային տնտեսական համաժողովի 2014-2015թթ. զեկույցում Հայաստանի դիրքը այս ոլորտում վատացել է և ներկայումս Հայաստանը աշխարհի 144 երկրների շարքում գրավում է 96-րդ տեղը՝ նախորդ տարվա 93-ի փոխարեն: Սա խոսում է այն մասին, որ աշխարհի որոշ երկրներ այս ոլորտում ունեցել են բարելավումներ և առաջ են անցել Հայաստանից իրենց գնահատականով, հետևաբար նաև՝ դիրքով: Նույնը վերաբերում է նաև **«ֆինանսավորում տեղական արժեթղթերի շուկայի միջոցով»** (բարելավում 3 տեղով) և **«օրենսդրական իրավունքների ինդեքս»** (բարելավում 2 տեղով) ոլորտներին, որոնց գնահատականները, թեև նախորդ տարվա համեմատ չեն փոխվել, սակայն Հայաստանի դիրքը դրանց գծով բարելավվել է: Ներկայումս **«Ֆինանսական շուկայի զարգացվածություն»** հիմնասյան իր գնահատականով Հայաստանը գերազանցում է Ղազախստանին, Մոլդովային, Ուկրաինային, Սերբիային, Ռուսաստանին, Տաջիկստանին, Ալբանիային, Իրանին, Սլովենիային (տե՛ս աղյուսակ 7):

**«Տեխնոլոգիական պատրաստվածություն»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է 1 տեղով՝ պայմանավորված Հայաստանում **ինտերնետից օգտվողների** (բարելավում 13 տեղով) և **լայնաշերտ ինտերնետի բաժանորդների** (բարելավում 4 տեղով) **թվաքանակի** ավելացմամբ, ինչպես նաև **«նորագույն տեխնոլոգիաների առկայություն»** ցուցանիշի 2 տեղով բարելավմամբ: Միևնույն ժամանակ հետընթաց է արձանագրվել **«օտարերկրյա ուղղակի ներդրումներ և տեխնոլոգիաների փոխանցում»** (վատացում 29 տեղով), **«ֆիրմաների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացում»** (վատացում 15 տեղով) և **լայնաշերտ բջջայինի բաժանորդների** (վատացում 10 տեղով) թվաքանակի նվազման պատճառով: **Տեխնոլոգիական պատրաստվածության** մակարդակով Հայաստանը գերազանցում է Ուկրաինային, Ալբանիային, Իրանին, Ղրղզստանին և Տաջիկստանին (տե՛ս աղյուսակ 7):

**«Շուկայի չափը»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 1 տեղով, թեև դրա հիմքում ընկած 4 ոլորտներից 3-ի գծով Հայաստանի դիրքերը բարելավվել են: Մասնավորապես, **«արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում»** ցուցանիշը բարելավվել է 3 տեղով, «**ՀՆԱ՝ ըստ գնողունակության համարժեքության»** ցուցանիշը՝ 1 տեղով և «**արտաքին շուկայի չափը**» ցուցանիշը՝ 1 տեղով: Միակ ցուցանիշը, որի գծով Հայաստանը մի փոքր հետընթաց է արձանագրել դա «**ներքին շուկայի չափ**»-ն է, որի գնահատականը ձևավորվել է գործարար-ղեկավարների հարցումների արդյունքում: **«Շուկայի չափը»** հիմնասյան դիրքով Հայաստանը գերազանցում է միայն Մոլդովային և Մոնտենեգրոյին (տե՛ս աղյուսակ 7):

**«Գործարարության զարգացվածություն»** հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 6 տեղով: Հետընթաց է արձանագրվել **կլաստերների զարգացման վիճակի** (29 տեղով), **միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողության** (10 տեղով), **բարձր ավելացված արժեքի ստեղծման պրոցեսում արտահանող ընկերությունների ներգրավվածության** (6 տեղով), **տեղական արտադրողների քանակի** (5 տեղով) և **տեղական արտադրողների որակի** (1 տեղով)

ոլորտներում: Միևնույն ժամանակ առաջընթաց է գրանցվել **իրավասությունները լիազորելու պատրաստակամության** (բարելավում 9 տեղով) և **արտադրական գործընթացի կատարելագործվածության** (բարելավում 1 տեղով) ոլորտներում: Ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի գնահատականի, **գործարարության զարգացվածությամբ** Հայաստանը գերազանցում է Մոնտենեգրոյին, Ուկրաինային, Ալբանիային, Բուլղարիային, Իրանին, Վրաստանին, Ղրղզստանին, Մոլդովային, և Սերբիային (տե՛ս աղյուսակ 8):

**«Նորամուծություններ» հիմնասյան** բոլոր ցուցանիշների գնահատականները, բացառությամբ՝ 1 մլն մարդու հաշվով **պատենտների քանակի**, ստացվում են հարցումների արդյունքում: Այս հիմնասյան գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 1 տեղով՝ պայմանավորված **նորամուծությունների ունակություն** (21 տեղով), **առաջավոր տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումներ** (10 տեղով) և **համալսարան-արդյունաբերություն հետազոտական համագործակցություն** (5 տեղով) ցուցանիշների վատացմամբ: Ընդ որում, այս ցուցանիշների գնահատականները ստացվել են հարցումների արդյունքում: Միևնույն ժամանակ առաջընթաց է արձանագրվել **հետազոտությունների և զարգացման (R&D) վրա ընկերությունների ծախսերի** ավելացման (բարելավում 7 տեղով), **գիտահետազոտական ինստիտուտների որակի** բարելավման (1 տեղով), ինչպես նաև 1 մլն մարդու հաշվով **պատենտների քանակի** ավելացման (բարելավում 3 տեղով) հաշվին: **Նորամուծությունների մակարդակով** Հայաստանը գերազանցում է Բուլղարիային, Սերբիային, Ալբանիային, Վրաստանին, Մոլդովային և Ղրղզստանին (տե՛ս աղյուսակ 8):

Հայաստանի տեղը (դիրքը) աշխարհի 144 երկրների թվում՝ ըստ դիտարկված 114 ցուցանիշների, ինչպես նաև դրանց բարելավման կամ վատացման դինամիկան ներկայացված է աղյուսակ 2-ում, որը հնարավորություն է տալիս հասկանալու Հայաստանի մրցունակության հիմնասյուների գնահատականների բարելավումը կամ վատացումը պայմանավորող գործոնները:

Ինչ վերաբերում է հարավկովկասյան տարածաշրջանի երկրներին, ապա **համաշխարհային մրցունակության ինդեքսով** երկու երկրներն էլ գերազանցում են Հայաստանին: Ադրբեջանը մրցունակության ինդեքսով զբաղեցնում է 38-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով առաջընթաց 1 մակարդակով, իսկ Վրաստանը զբաղեցնում է 69-րդ տեղը և նախորդ տարվա համեմատ գրանցել է 3 մակարդակով առաջընթաց (տե՛ս աղյուսակ 3): Հայաստանի հարևան մյուս երկու երկրներ Թուրքիան և Իրանն էլ են գերազանցում եմ Հայաստանին համաշխարհային մրցունակության ինդեքսով: Մասնավորապես, Թուրքիան զբաղեցնում է 45-րդ, իսկ Իրանը՝ 83-րդ տեղը:

**Համաշխարհային մրցունակության ինդեքսով** Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանին զիջում են Սերբիան (94-րդ տեղ) և Ալբանիան (97-րդ տեղ), իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Տաջիկստանն (91-րդ տեղը) ու Ղրղզստանը (108-րդ տեղը) (տե՛ս աղյուսակ 5):

**«Համաշխարհային մրցունակություն 2014/2015»** զեկույցում մրցունակ երկրների առաջին տասնյակում են Շվեյցարիան, Սինգապուրը, ԱՄՆ-ը, Ֆինլանդիան, Գերմանիան, Ճապոնիան,

Հոնկոնգը, Նիդեռլանդները, Միացյալ Թագավորությունը և Շվեդիան, իսկ վերջին տասնյակում՝ Բուրկինա Ֆասոն, Թիմոր Լեստեն, Հայիթին, Սիեռա Լեոնեն, Բուրունդին, Անգոլան, Մավրիտանիան, Եմենը, Չադը և Գվինեան:

**Հայաստանի** համաշխարհային մրցունակության 2014/2015թթ. ինդեքսը և առանձին հիմնասյուների ենթաինդեքսները, դրանց 2008-2014թթ. դինամիկան, Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը, ինչպես նաև հարավկովկասյան և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Թուրքիայի և Իրանի ինդեքսների համեմատական բնութագիրը ներկայացված է ստորև բերված 1-8 աղյուսակներում:

# Հայաստանի դիրքը ըստ համաշխարհային մրցունակության հիմնասյուների

*Աղյուսակ 1*

| | Ինդեքսի անվանումը | 2014-2015թթ. դիրքը (144 երկրների թվում) | 2013-2014թթ. դիրքը (148 երկրների թվում) | 2012-2013թթ. դիրքը (144 երկրների թվում) | 2011-2012թթ. դիրքը (142 երկրների թվում)[11] | 2010-2011թթ. դիրքը (139 երկրների թվում)[12] | 2009-2010թթ. դիրքը ( 133 երկրների թվում)[13] | 2008-2009թթ. դիրքը (134 երկրների թվում) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Համաշխարհային մրցունակության ինդեքս** | **85** | **79** | **82** | **92** | **98**[14] | **97** | **97** |
| 1. | Հաստատություններ | 72↓ | 65 | 71 | 83 | 97 | 95 | 96 |
| 2. | Ենթակառույցներ | 78↑ | 80 | 80 | 77 | 90 | 81 | 90 |
| 3. | Մակրոտնտեսական կայունություն | 77↓ | 64 | 83 | 114 | 99 | 53 | 83 |
| 4. | Առողջապահություն և առաջնային կրթություն | 99↓ | 85 | 80 | 94 | 93 | 97 | 97 |
| 5. | Բարձրագույն կրթություն և վերապատրաստում | 75↑ | 77 | 70 | 76 | 91 | 96 | 94 |
| 6. | Ապրանքային շուկայի արդյունավետություն | 64↓ | 58 | 72 | 108 | 113 | 116 | 110 |
| 7. | Աշխատուժի շուկայի արդյունավետություն | 74↓ | 50 | 30 | 34 | 47 | 47 | 45 |
| 8. | Ֆինանսական շուկայի զարգացածություն | 97↓ | 76 | 78 | 95 | 110 | 97 | 107 |
| 9. | Տեխնոլոգիական պատրաստվածություն | 71↑ | 72 | 92 | 88 | 108 | 105 | 112 |
| 10. | Շուկայի չափը | 118↓ | 117 | 115 | 115 | 116 | 109 | 111 |
| 11. | Գործարարության զարգացվածությունը | 93↓ | 87 | 92 | 107 | 109 | 112 | 120 |
| 12. | Նորամուծություններ | 104↓ | 103 | 105 | 112 | 116 | 108 | 106 |

*11 2011/2012թթ. հետազոտության մեջ ավելացել են 3 նոր երկիր՝ Բելիզը, Հաիթին և Եմենը: Բացի այդ, Սուրինամը, որը գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով 2010/2011թթ.հետաոտությունից դուրս էր մնացել, 2011/2012թթ. հետազոտության մեջ նորից ներգրավվել է, իսկ Լիբիան դուրս է մնացել գնահատումից՝ երկրում սոցիալական անհանգստությունների պատճառով հարցումներ իրականացնելու անհնարինության պատճառով:*

*12 2010/2011թթ. հետազոտության մեջ ավելացել են 7 երկիր՝ Անգոլան, Կապե Վերդեն, Ռուանդան, Սվազիլանդը, Իրանը, Լիբանանը և Մոլդովան և դուրս է եկել Սուրինամը՝ գնահատման համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով:*

*13 Ի տարբերություն նախորդ տարվա՝ Մոլդովան չի ներառվել դիտարկվող երկրների թվում:*

*14 Եթե Հայաստանի 2010/2011թթ. մրցունակության գնահատականը դիտարկում ենք 2009/2010թթ. հետազոտության մեջ ընդգրկված 133 երկրների թվում, Հայաստանը զբաղեցնում է 94-րդ տեղը:*

# Հայաստանի դիրքը
# ըստ համաշխարհային մրցունակության հիմնասյուների և առանձին ցուցանիշների

*Աղյուսակ 2*

| | Ինդեքսի անվանումը | 2014-2015 թթ. երկրի դիրքը աշխարհի 144 երկրների շարքում | 2013-2014 թթ. երկրի դիրքը աշխարհի 148 երկրների շարքում | 2012-2013 թթ. երկրի դիրքը աշխարհի 144 երկրների շարքում | 2011-2012 թթ. երկրի դիրքը աշխարհի 142 երկրների շարքում | 2010-2011 թթ. երկրի դիրքը աշխարհի 139 երկրների շարքում | 2009-2010 թթ. երկրի դիրքը աշխարհի 133 երկրների շարքում | 2008-2009 թթ. երկրի դիրքը աշխարհի 134 երկրների շարքում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1** | **Հաստատությունների ինդեքս** | **72** | **65** | **71** | **83** | **97** | **95** | **96** |
| 1.01 | Մասնավոր սեփականության իրավունքը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 67 | 54 | 64 | 95 | 98 | 79 | 69 |
| 1.02 | Մտավոր սեփականության պաշտպանվածությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 84 | 75 | 80 | 96 | 107 | 107 | 108 |
| 1.03 | Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 80 | 84 | 81 | 91 | 103 | 104 | 110 |
| 1.04 | Քաղաքական գործիչների նկատմամբ հանրության վստահությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 76 | 71 | 71 | 83 | 89 | 92 | 104 |
| 1.05 | Անօրինական վճարներ և կաշառակերություն (2013 -2014թթ. կշռված միջինը) | 76 | 75 | 82 | 97 | 104 | --- | --- |
| 1.06 | Դատական համակարգի անկախությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 109 | 110 | 110 | 108 | 118 | 122 | 123 |
| 1.07 | Պետական այրերի վճիռների վրա «հովանավորչության» ազդեցությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 71 | 68 | 75 | 78 | 78 | 82 | 94 |
| 1.08 | Կառավարության ծախսումների շոայլումը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 76 | 60 | 45 | 48 | 54 | 54 | 77 |
| 1.09 | Կառավարության կարգավորման բեռը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 43 | 34 | 41 | 52 | 91 | 64 | 71 |
| 1.10 | Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի կարգավորման գործում (2013 -2014թթ. կշռված միջինը) | 95 | 74 | 75 | 81 | 104 | 111 | 97 |
| 1.11 | Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում (2013 -2014թթ. կշռված միջինը) | 98 | 76 | 79 | 84 | 103 | 98 | |
| 1.12 | Կառավարության քաղաքականության թափանցիկությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 39 | 24 | 16 | 35 | 53 | 65 | 103 |
| | Կառավարության ծառայություններն ուղղված գործարար միջավայրի բարելավմանը (2011 -2012թթ. կշռված միջինը) | --- | --- | 31 | --- | --- | --- | --- |
| 1.13 | Ահաբեկչության գործարար ծախքը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 46 | 38 | 8 | 17 | 32 | 26 | 33 |
| 1.14 | Հանցագործությունների և բռնությունների գործարար ծախքը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 22 | 20 | 13 | 25 | 31 | 23 | 32 |
| 1.15 | Կազմակերպված հանցագործությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 57 | 57 | 52 | 61 | 66 | 69 | 67 |
| 1.16 | Ոստիկանական ծառայության հուսալիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 81 | 76 | 93 | 105 | 112 | 104 | 95 |
| 1.17 | Ընկերությունների բարոյական վարքագիծը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 90 | 81 | 91 | 106 | 118 | 115 | 115 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.18 | Աուդիտի և հաշվետվական ստանդարտների կիրառման տարածվածությունը ((2013 -2014թթ. կշռված միջինը) | 83 | 87 | 77 | 87 | 101 | 92 | 97 |
| 1.19 | Կորպորատիվ խորհուրդների ուժը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 104 | 96 | 110 | 115 | 130 | 123 | 123 |
| 1.20 | Փոքրամասնություն կազմող բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 97 | 100 | 104 | 120 | 131 | 123 | 124 |
| 1.21 | Ներդրողների պաշտպանվածության ինդեքսի ամրությունը, 2013թ. ինդեքս | 22 | 25 | 80 | 77 | 77 | 71 | 67 |
| **2** | **Ենթակառույցների ինդեքս** | **78** | **80** | **80** | **77** | **90** | **81** | **90** |
| 2.01 | Ընդհանուր ենթակառույցների որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 61 | 67 | 71 | 77 | 76 | 78 | 91 |
| 2.02 | Ճանապարհների որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 80 | 82 | 80 | 92 | 87 | 72 | 79 |
| 2.03 | Երկաթուղային ենթակառույցի որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 68 | 69 | 63 | 69 | 79 | 82 | 83 |
| 2.04 | Նավահանգստային ենթակառույցի որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 134 | 122 | 127 | 132 | 128 | 117 | 115 |
| 2.05 | Օդային տրանսպորտի ենթակառույցի որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 72 | 66 | 69 | 74 | 77 | 74 | 85 |
| 2.06 | Թռիչքային կիլոմետրը 1 շնչի հաշվով (2014 թ. հունվար և հուլիս ամիսների մեկ շաբաթվա միջինը) | 100 | 106 | 96 | 98 | 100 | 100 | 99 |
| 2.07 | Էլեկտրականության մատակարարման որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 62 | 60 | 69 | 71 | 78 | 82 | 89 |
| 2.08 | Բջջային հեռախոսների բաժանորդներ (100 մարդու հաշվով), 2013թ. | 70 | 80 | 80 | 33 | 81 | 93 | 123 |
| 2.09 | Հեռախոսային գծերը (100 մարդու հաշվով), 2013 թ. | 58 | 65 | 70 | 69 | 64 | 66 | 65 |
| **3** | **Մակրոտնտեսական կայունություն** | **77** | **64** | **83** | **114** | **99** | **53** | **83** |
| 3.01 | Պետբյուջեի հավելուրդը/պակասուրդը ՀՆԱ-ում, %, 2013 թ. | 64 | 50 | 66 | 92 | 113 | 66 | 103 |
| 3.02 | Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում, %, 2013 թ. | 103 | 84 | 77 | 76 | 49 | 36 | 38 |
| 3.03 | Գնաճի միջին տարեկան փոփոխությունը, %, 2013 թ. | 104 | 1 | 105 | 119 | 78 | 75 | 61 |
| | Վարկավորման և ավանդների ներգրավման միջին տոկոսադրույքների սպրեդը, 2012 թ. | --- | --- | --- | 114 | 112 | 106 | 117 |
| 3.04 | Պետական պարտքը ՀՆԱ-ում, %, 2013թ. | 69 | 66 | 57 | 68 | 70 | 19 | 26 |
| 3.05 | Երկրի սուվերեն վարկանիշ, 2014թ. մարտի դրությամբ | 85 | 95 | 89 | 86 | 86 | -- | -- |
| 4 | **Առողջապահություն և առաջնային կրթություն** | **99** | **85** | **80** | **94** | **93** | **97** | **97** |
| 4.01 | Մալարիայի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2012 թ. | n/a | 1 | 1 | 1 | 1 | 1 | 67 |
| 4.02 | Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա (2013 -2014թթ. կշռված միջինը) | n/a | 1 | 1 | 1 | 1 | 1 | 67 |
| 4.03 | Տուբերկուլյոզի դեպքերի թիվը (100 000 մարդու հաշվով), 2013թ. | 74 | 76 | 82 | 82 | 80 | 79 | 75 |
| 4.04 | Տուբերկուլյոզի ազդեցությունը գործարարության վրա (2013 -2014թթ. կշռված միջինը) | 71 | 76 | 78 | 86 | 84 | 48 | 69 |
| 4.05 | ՁԻԱՀ-ի տարածվածությունը, % չափահաս (15-49 տարեկան) բնակչությունից, 2013թ. | 1 | --- | --- | --- | --- | --- | --- |
| 4.06 | ՁԻԱՀ-ի գործարար ծախքը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 37 | 50 | 46 | 64 | 55 | 34 | 49 |
| | ՁԻԱՀ-ի կանխումը, 2010 թ. | --- | 45 | 12 | 21 | 22 | 15 | 23 |
| 4.07 | Մանկական մահացությունը (1000 ծննդի հաշվով), 2013թ. | 74 | 78 | 77 | 83 | 82 | 75 | 84 |
| 4.08 | Կյանքի սպասվող տևողություն, 2013թ. | 67 | 71 | 64 | 64 | 65 | 88 | 87 |
| 4.09 | Առաջնային կրթության (դպրոցների) որակը (2013 -2014թթ.կշռված միջինը) | 83 | 77 | 70 | 88 | 88 | 81 | 82 |
| 4.10 | Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2012թ. | 120 | 115 | 108 | 119 | 115 | 108 | 109 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | **Բարձրագույն կրթություն և վերապատրաստում** | **75** | **77** | **70** | **76** | **91** | **96** | **94** |
| 5.01 | Երկրորդային (բակալավրիատ) կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը, 2012թ. | 51 | 61 | 57 | 52 | 69 | 62 | 57 |
| 5.02 | Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը, 2012թ. | 59 | 51 | 50 | 49 | 68 | 65 | 65 |
| 5.03 | Կրթության համակարգի որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 86 | 69 | 79 | 97 | 115 | 105 | 98 |
| 5.04 | Մաթեմատիկական և գիտական կրթության որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 69 | 67 | 71 | 81 | 74 | 73 | 76 |
| 5.05 | Կառավարման դպրոցների որակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 116 | 120 | 127 | 131 | 130 | 125 | 124 |
| 5.06 | Ինտերնետի հնարավորությունը դպրոցներում (2013 -2014թթ. կշռված միջինը) | 68 | 78 | 78 | 92 | 107 | 101 | 103 |
| 5.07 | Տեղական մասնագիտացված գիտահետազոտական և ուսումնական ծառայությունների մատչելիությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 120 | 119 | 106 | 114 | 124 | 120 | 125 |
| 5.08 | Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 119 | 114 | 98 | 105 | 116 | 114 | 117 |
| 6 | **Ապրանքային շուկայի արդյունավետությունը** | **64** | **58** | **72** | **108** | **113** | **116** | **110** |
| 6.01 | Տեղական մրցակցության ինտենսիվությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 85 | 102 | 130 | 139 | 136 | 128 | 132 |
| 6.02 | Շուկայի գերիշխանությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 93 | 75 | 90 | 133 | 133 | 129 | 133 |
| 6.03 | Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 105 | 97 | 116 | 138 | 138 | 132 | 132 |
| 6.04 | Հարկավորման ազդեցությունը ներդրումները կատարելու խթանների վրա (2013 -2014թթ. կշռված միջինը) | 105 | 96 | --- | --- | --- | --- | --- |
| | Հարկավորման չափը և ազդեցությունը (2011 -2012թթ. կշռված միջինը) | --- | --- | 45 | 65 | 84 | 86 | 84 |
| 6.05 | Հարկման ընդհանուր դրույքաչափը, 2013թ. | 73 | 76 | 79 | 74 | 56 | 52 | 42 |
| 6.06 | Գործարարություն հիմնելու գործընթացների քանակը, 2013թ. | 3 | 10 | 8 | 34 | 34 | 75 | 58 |
| 6.07 | Գործարարություն սկսելու համար պահանջվող օրերի քանակը, 2013թ. | 9 | 34 | 34 | 63 | 56 | 53 | 38 |
| 6.08 | Գյուղատնտեսական քաղաքականության ծախքերը (2013 -2014թթ. կշռված միջինը) | 79 | 45 | 44 | 47 | 41 | 26 | 30 |
| 6.09 | Առևտրային խոչընդոտների գերակայությունը (2013 -2014թթ.կշռված միջինը) | 80 | 94 | 99 | 96 | 100 | 97 | 104 |
